ԿՐԿԻՆ ԷՊՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Երկու տարի առաջ հրատարակված մեր հոդվածում՝ քննության էր առնվել մ.թ.ա. XIII դարի վերջին—XII դարում Առաջավոր Ասիայում ընթացած լայնածավալ էթնիկական տեղաշարժերի խնդիրը, որը անմիջականորեն առնչվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների (Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազաններ) հետ։ Օբյեկտիվ պատճառներով հոդվածում չէին օգտագործվել որոշ կարևոր ուսումնասիրությունների արդյունքներ, որոնք ամրապնդում են մեր տեսակետների մի մասը, ինչպես նաև զգալի շտկումներ են մտցնում էթնիկական տեղաշարժերի գնահատման հարցում[2]։

Խաթիի անկման նոր մեկնաբանությունը

Գերմանացի եգիպտագետ Վ. Հելքը, ի մի բերելով խեթական տերության անկման խնդրին առնչվող վերջին ուսումնասիրությունների արդյունքները, 1987 թ. առաջարկեց մի նոր առանցքագաղափար[3], որի էությունը հետևյալն է։

Մ.թ.ա. XIII դարի վերջին քառորդում Փոքր Ասիայում (տևական երաշտի հետևանքով—Ա. Ք.) տիրող սովի պատճառով խեթերի մայրաքաղաք Խաթթուսասում խոշոր ապստամբություն է բռնկվում, որի հետևանքով ավերվում են արքայական պալատը, բոլոր վարչական կառույցները և գլխավոր տաճարը, իսկ բնակչությունը զանգվածաբար լքում է քաղաքը[4]։

Հեղինակը բացառում է Խաթթուսասի կործանման արտաքին պատճառը՝ թշնամական հարձակումը։ Ինչ վերաբերում է «ծովի ժողովուրդների» մասնակցությանը Խաթթիի անկմանը, ապա նրանց տեղաշարժերը ընթացել են արևելամիջերկրածովյան ավազանի սահմանափակ առափնյա շերտով, ընդ որում դրանք առավել ինտենսիվ բնույթ են կրել միայն մ.թ.ա. 1208—

---

1 Ա. Վ. Քոսյան. էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում («ծովի ժողովուրդներ», մուշկեր և ուրումեացիներ).—«Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 1, էջ 65—78։

2 Անցած երկու տարում այդ խնդիրը քննարկվեց նախ 1992 թ. հունիսին կայացած ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հոբելյանական գիտական նստաշրջանում («Խաթթիի անկման խնդրի չուրջ»), այնուհետև 1993 թ. ապրիլին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում անցկացված «Հայոց պետականությունը հին և միջին դարերում» թեմայով գիտական նստաշրջանում («Վերին Եփրատի ավազանը մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսին»)։ Սույն հոդվածի հիմքում ընկած են ինչպես վերոհիշյալ զեկուցումների հիմնական եզրակացությունները, այնպես էլ որոշ կարևոր նորույթներ։

3 W. Helck. Nochmals zu Ramses' III. Seevölkerbericht, „Studien zur altägyptischen Kultur", Bd. 14, 1987, S. 129—145.

4 Բողազքյոյ-Խաթթուսասից հայտնաբերված հնագիտական նյութի հիման վրա փոքրասիական հնագիտության առաջնակարգ հնագետներից Կ. Բիտտելը դեռ 1976 թ. հանգել էր այսպիսի եզրակացության. քաղաքն ամբողջությամբ չի այրվել, այլ հրդեհին զոհ են գնացել միայն վարչական կառույցները, պալատը և որոշ այլ շինություններ, բայց ոչ բնակելի թաղամասերը (K. Bittel. Das Ende des Hethiterreiches aufgrund archäologischer Zeugnisse.— „Jahresbericht des Instituts für Vorgeschichte der Univ. Frankfurt a. M., 1976" [hrsg. H. Müller-Karpe], München, 1977, S. 36ff):

1206 թթ. միջև Սիրիայի արևմուտքում՝ Լիտանի գետի ավազանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո։ Ուգարիտի և տարածաշրջանի մի շարք կարևոր խեթահպատակ քաղաքների ավերման հետևանքով կտրվել է Եգիպտոս—Փոքր Ասիա ցամաքային ուղին, որով հացահատիկ էր փոխադրվում դեպի սովյալ խեթական տերության կենտրոնական շրջաններ։ Այս իրադարձությունը ճակատագրական նշանակություն է ունեցել վերջինիս համար, քանի որ մինչ այդ «ծովի ժողովուրդները» կտրել էին նաև երկու դաշնակիցներին կապող ծովային ուղին (գրավվել էր Ալասիա-Կիպրոս կղզին)։ Սա նշանակում է, որ Խաթթուսասի ապստամբությունը կարելի է թվագրել մոտավորապես մ.թ.ա. 1206 թ. հետո ընկած ժամանակաշրջանով։

Փոքր Ասիայի բնակչության զանգվածային արտագաղթի կապակցությամբ վերանայման կարիք ունի մեր՝ նախկինում արտահայտած կարծիքը Խաթթիի անկման կասկա-հայասական պատճառի մասին[5]։

Խաթթիի կենտրոնական շրջանների՝ մ.թ.ա. XII—VIII դդ. վերաբերող հնագիտական ուսումնասիրությունները վկայում են այստեղ քիչ թե շատ խոշոր բնակավայրերի բացակայության մասին։ Որքան էլ տարօրինակ է, նշված տարածքը դուրս է մնում նույն ժամանակաշրջանում գոյատևած լուվիական (երբեմն՝ «ուշ խեթական») պետականության ընդգրկման արեալից[6]։ Նախկինում այս հանգամանքը բացատրվել է նվաճողների (թրակա-փռյուգացիներ, կասկեր, և այլն) կողմից տեղական բնակչության մասնակի բնաջնջումով և մյուս մասի հարկադրական արտագաղթով։ Սակայն այժմ այս խնդիրը կարելի է հիմնականում լուծված համարել, մանավանդ որ այդ ենթադրվող նվաճողների ոչ մի հետք նշված տարածքում չի հայտնաբերվել։ Հենց կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության արտագաղթով կարելի է բացատրել խեթական պետականության ավանդույթների շարունակությունը ոչ թե նախկին տեղում, այլ տերության ծայրամասային շրջաններում (հարավային և արևելյան Փոքր Ասիա, Հյուսիսային Սիրիա) ի դեմս լուվիական պետական կազմավորումների։ Խաթթիի անկման վերոհիշյալ վարկածը կարելի է պայմանականորեն անվանել «դիսպերսիոն»։

Տրոյական պատերազմը և թրակա-փռյուգական խնդիրը

Մ.թ.ա. 1114 թ. Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում հիշատակվող մուշկերի՝ բալկանյան թրակա-փռյուգական ցեղերի հետ ունեցած կապի մասին ենթադրությունը այժմ ծանրակշիռ հակափաստարկներ ունի։

Բանն այն է, որ մինչև 1980-ական թթ. հնագիտության մեջ գրեթե անվերապահորեն ընդունվում էր ամերիկյան հնագետ Կ. Բլեջենի կարծիքը, ըստ որի Հոմերոսյան պոեմների Տրոյան համապատասխանում է Տրոյա VII ա հնագիտական շերտին[7]։ Կ. Բլեջենը գտնում էր, որ վերջինս ավերվել էր մոտավորապես մ.թ.ա. 1240 թ., որը հնարավոր է կապել Տրոյական պատերազմի հետ։ Այս կարծիքից ելնելով, մասնագետները ենթադրում էին, որ, օգտվելով Տրոյական թագավորության թուլացումից ու անկումից, եվրոպացի (բալկանյան) թրակա-փռյուգական ցեղերը որոշ ժամանակ անց ներխուժել են Փոքր Ասիա և վերջ տվել խեթական տերության գոյությանը[8]։ Ընդ ո-

---

5 Ա. Վ. Քոսյան. նշվ. աշխ., էջ 73—74։

6 Լուվիական պետական կազմավորումները Փոքր Ասիայում վկայված են Հալիսի մեծ ոլորտից հարավ և արևելք (տե՛ս А. В. Косян. Лувийские царства Малой Азии. Ереван, տպագրվում է)։

7 C. W. Blegen. Troy and the Trojans. London. 1963, p. 169ff.

8 E. von Schuler. Die Kaskaer. Berlin, 1965, S. 65; O. R. Gurney. The Hittites. Baltimore, 1966, p. 39; И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968 (այսուհետև՝ ПАН, сс. 117—119; R. D. Barnett. The Sea Peoples.— „Cambridge Ancient History" (այսուհետև՝ CAH), Cambridge, vol. II, ch. XXVIII,

բում ուշադրության չէր արժանացել այն հանգամանքը, թե ինչպես կարող էր երկրորդական, խեթերից կախյալ պետություն հանդիսացող Տրոյա-Վիլուսան դսպել (նույնիսկ իր «հզորության» շրջանում) այնպիսի մարտունակ և բազմաքանակ ցեղերին, որոնք, համաձայն խաթթիե կործանման բալկանյան վարկածի, հաղթական երթով անցան ողջ Փոքր Ասիան ու հասան մինչև Հայկական լեռնաշխարհ։

Սակայն 1980-ական թթ. մի շարք հնագետներ, վերաքննելով Կ. Բլեգենի հայտնաբերած տրոյական ողջ խեցեղեն նյութը, հանգեցին հետևյալ եզրակացության։

Srnjɯ VII ɯ և նրան նախորդած Srnjɯ VI շերտերը կործանվել են միայն մ.թ.ա. XI դարում, միկենյան Հունաստանի անհետացումից առնվազն երկու դար հետո, այսինքն, դրանցիս ոչ մեկը Հոմերոսի Տրոյան չէ[9]։ Իսկ վերջինիս (Srnjɯ V. h) ավերումը պետք է թվագրել «ուշհելլադյան III» ժամանակաշրջանով՝ մ.թ.ա. XIII դարի առաջին կեսով[10]։ Ավելին, ինչպես ցույց են տալիս վերջին տարիների խեթագիտական ուսումնասիրությունները, Հոմերոսյան Տրոյային համապատասխանող խեթական աղբյուրների Վիլուսան (Srnjɯ VI. h) միայն մի կարճ ժամանակամիջոցի ընթացքում է անկում ապրել, որը կապված է եղել խեթա-ախխիյավական (նույնն է ինչ մեկենյան) արտաքին քաղաքական փոխհարաբերությունների սրման հետ[11]։ Հավանաբար, խեթական արքա Խաթթուսիլիս III-ի եռամարման մերջին շրջանում Վիլուսան արևմտափոքրասիական մի շարք երկրների հետ միասին ենթարկվել է միկենցիներե հարձակմանը, որի հետևանքով նրա արքա Վալմուն գահազուրկ է եղել։ Նրա հաջորդ Թուդխալիյաս IV-ը, անսնելով վճռական գործողությունների, վերանվաճել է ոչ միայն նշված երկրները, այլև նույնիսկ միկենցիների գլխավոր հենակետ Միլլավանդան (Միլեթ), և Վալմուն վերահաստատվել է իր գահին[12]։ Ահա այս իրադարձությունը կարող էր արտացոլված լինել Հոմերոսյան պոեմներում Տրոյական պատերազմի տեսքով։

Ասվածին կարելի է ավելացնել հետևյալը։ Թե՛ «Իլիականը», թե՛ լեզվաբանական ուսումնասիրությունների տվյալները վկայում են այն մասին, որ նշված ժամանակաշրջանում պատմական Տրովադայի և նրան հարող եվրոպական ափի բնակչությունը գերազանցապես բաղկացած է եղել միմյանց հետ սերտորեն կապված թրակա-փռյուգական ցեղերից[13]։ Դատելով խեթա-

---

pp. 3—14; O. A. Lehmann. Der Untergang des hethitischen Grossreiches und die neuen Texte aus Ugarit. — „Ugarit-Forschungen", Bd. 2, 1970, S. 42ff; Fr. Cornelius. Geschichte der Hethiter. Darmstadt, 1973, S. 277—279 և այլն։

[9] Chr. Podzuweit. Die mykenische Welt und Troja, „Südosteuropa zwischen 1600 und 1000 v. Chr." (Prähistorische Archäologie in Südosteuropa, Bd. 17, Berlin, 1982), S. 65—88 (հղվում է ըստ Л. С. Клейн. Троянская война в эпосе и в истории, с. 210 [послесловие к книге: А. Кравчук. Троянская война, М., 1991]).

[10] Chr. Podzuweit. Op. cit., S. 80; M. I. Finley. The Trojan War. — „Journal of Hellenic Studies", vol. 84, 1964, pp. 4—7; D. Easton. Has the Trojan War Been Found?. — „Antiquity", vol. 59, 1985, pp. 189—191; T. R. Bryce. The Nature of Mycenaean Involvement in Western Anatolia. — „Historia", Bd. XXXVIII, 1989, pp. 18—19.

[11] Խոսքը Ախխիյավայի արքայի և նրա փոքրասիական դաշնակից Միլլավանդայի կառավարիչ Ատպասի հովանավորությամբ թերակղզու արևմուտքում գտնվող երկրների (Սեխա, Վիլուսա-Տրոյա, Միրա, Լուկկա, Լացպա-Լեսբոս) հանդեպ ունի Պիյամարադուի գործունեության մասին է (տե՛ս T. R. Bryce. Op. cit., p. 15ff)։

[12] Նույն տեղում։

[13] Տրոյական (Հոմերոսյան) և թրակյան նյութի էթնո-տեղանվանական ուսումնասիրության հիման վրա Լ. Գինդինը հանգել է հետևյալ եզրակացության. հոմերոսյան Տրոյայի բնակչության գերակշիռ մասը կազմել է թրակյան էթնոսը, որը, հավանաբար, առկա է եղել այստեղ դեռ Srnjɯ I ժամանակաշրջանից՝ մ. թ. ա. III հազ. սկզբից (Л. А. Гиндин. Лувийцы в Трое

կան աղբյուրներից, այս շրջանի բնակչությունը մ.թ.ա. XIV—XIII դդ. մըշտապես խեթամետ դիրքորոշում է ունեցել, կապված միկենյան պետությունների ձգտման հետ՝ իրենց վերահսկողության տակ առնել Տրովադայով անցնող կարևորագույն առևտրական ուղիները։ Իհարկե, խեթա-վիլուսական դաշնակցային փոխհարաբերությունները և հոմերոսյան Տրոյայի՝ Troja VI h շերտի հետ նույնության փաստարկները, որքան էլ կարևոր լինեն, այնուամենայնիվ, դրանց հիման վրա չի կարելի միանշանակ կերպով եզրակացնել Բալկանյան թերակղզու հյուսիս-արևելքում և հարակից շրջաններում բնակվող թրակիա-փռյուգական ցեղերի զանգվածային արտագաղթի անհնարինության մասին։

Վերը նշվեց կենտրոնական Փոքր Ասիայում ներմուծովի հնագիտական մշակույթի բացակայության մասին մ.թ.ա. XII—VIII դդ.։ Սակայն արևմուտքում պատկերն այլ է։

Ավանդաբար, Փոքր Ասիայում փռյուգական էթնոսի կենտրոնացման վայր է դիտվում Սանգարիոս գետի (ժաման. Սակարյա) հովիտը, որտեղ գտնվում էր նրանց մայրաքաղաք Գորգիոնը։ Բալկաններից կենտրոնական Փոքր Ասիա շարժվելիս եկվորներն անպայման պիտի անցնեին այստեղով։ Ի՞նչ է իրենից ներկայացնում Գորդիոնի «փռյուգական» մշակույթը։

Երկար տարիներ Գորդիոնը պեղող հայտնի հնագետ Ռ. Ս. Յանգը գրտնում է, որ, չնայած այստեղի մշակույթը որոշ առումով խառնածին է, սակայն նրա կերտողները ամենևին թերզարգացած քոչվորներ չեն եղել։ Գորդիոնի պարիսպների շարվածքի եղանակը տարբերվում է խեթական ամրաշինությունից և սերտորեն առնչվում է Troja VI-ի պարիսպների հետ։ Քաղաքի կառույցները մեգարոնատիպ են, իսկ վերջինիս հնագույն օրինակները վկայված են ինչպես Տրոյայում (II շերտի «մեգարոն բ»), այնպես էլ՝ Բեյջեսուլթանում (արևմտյան Փոքր Ասիա)[14]։

Փոքրասիական հնագիտական մշակույթների խոշոր գիտակ Մ. Մելլինքի կարծիքով, Գորդիոնի մշակույթի շատ գծեր բնորոշ են արևմտափոքրասիական ուշբրոնզեդարյան մշակույթին, սակայն այստեղ պարզորոշ նկատվում է տեղականը։ Ընդ որում վերջինս (բարձր զարգացած մետաղամշակություն, արևելյան ծագում ունեցող զանազան իրեր, կենդանակերպ միագույն խեցեղեն) ավելի վաղ շրջանում վկայված է Մալաթիայում, Կարքեմիշում և Հյուսիսային Իրանում[15]։

Գորդիոնի գորշ, միագույն խեցեղենի հիման վրա Ա. Գյունտերը նոր էթնիկական տարրի ներթափանցումը այստեղ թվագրում է մ.թ.ա. II—I հազ. սահմանագլխով։ Նրա կարծիքով, Գորդիոնի ուշբրոնզեդարյան խեցեղենը շատ մոտ է Բողազքոյ-Խաթթուսասի խեցեղենին և քիչ առնչություններ ունի արևմտյան Փոքր Ասիայի հետ, սակայն մ.թ.ա. I հազ. սկզբին պարզորոշ կերպով վկայված է արևմտյան ազդեցությունը[16]։

Վերոհիշյալ եզրակացությունները թույլ են տալիս ենթադրելու մ.թ.ա. XI—X դդ. ընթացքում հյուսիս-արևմտյան և արևմտյան Փոքր Ասիայից դեպի Ծանգարիոսի հովիտ տեղի ունեցած էթնիկական տեղաշարժ։ Դրա բնույթը պարզե-

---

(опыт лингвофилологического анализа.—«Вопросы языкознания», 1990, № 1, с. 45—65; Он же: Троянская война и Аххиява хеттских клинописных текстов.—«Вестник древней истории», 1991, № 3, с. 38):

[14] R. S. Young. The Nomadic Impact: Gordion, „Dark Ages and Nomads c. 1000 B. C." (Studies in Iranian and Anatolian Archaeology). Istanbul, 1963, pp. 52—57.

[15] M. J. Mellink. Mita, Mushki and Phrygians. „Fs. Bossert" („Anadolu Araştırmaları", C. II, Sayı 1—2), Istanbul, 1965, p. 323). Գորդիոնի մշակույթում արևելյան նյութի առկայության մասին տե՛ս նաև S. Kenneth. Phrygian Painted Animals: Anatolian Orientalizing Art, „Anatolian Studies", vol. XXIV, 1974, p. 169f.

[16] A. Gunter. Recent Archaeological Research in Turkey. — „Anatolian Studies", vol. XXX, 1980, p. 213.

լու համար կարևոր են հետևյալ նկատառումները։ Առաջին, Գորդիոնում բացակայում են խաթթուսասի հրդեհին (մոտավորապես մ.թ.ա. 1200 թ.±) համաժամանակյա ավերածությունների հետքեր։ Երկրորդ, բավական երկար ժամանակ տեղական և եկվոր խեցեղենը գոյակցել են մեկը մյուսի կողքին, ընդ որում սկզբում գերիշխել է առաջինը։ Իսկ սա նշանակում է, որ նոր էթնոսը ներթափանցել է այստեղ խաղաղ կերպով և աստիճանաբար, առանց տեղական բնակչության համար աղետալի հետևանքների[17]։

Այսպիսով, Տրոյայի և Գորդիոնի հնագիտական նյութը թույլ է տալիս հանդելու հետևյալ եզրակացության։

Մ.թ.տ. XIII դարի վերջին—XII դարի սկզբին բալկանյան ծագման թրակա-փռյուգական ցեղերի զանգվածային ներխուժում դեպի կենտրոնական Փոքր Ասիա չէր կարող տեղի ունենալ[18]։ Իսկ արևմտափոքրասիական բնակչության պարբերական տեղաշարժեր դեպի արևելք (կոնկրետ՝ Սանգարիոսի հովիտ), իրոք, հնարավոր է ենթադրել, սակայն միայն մ.թ.ա. XI—X դդ. ընթացքում, որի պատճառներն առայժմ անհայտ են։ Կարելի է ենթադրել դեռևս մ.թ.ա. XV—XIII դդ. դեպի արևմտյան Փոքր Ասիա ուղղված միկենյան դաղութացման շարունակությունը «հոմերոսյան» դարաշրջանում (մ.թ.ա. XI—IX դդ.)։ Այս դեպքում հնարավոր է ժամանակագրական կապ տեսնել մի կողմից Տրոյա VII ա շերտի ավերման, մյուս կողմից՝ նույն շրջանում Գորդիոնում տրոյական և ընդհանրապես արևմտափոքրասիական նյութի հայտնվելու միջև։ Ընդ որում ամենևին պարտադիր չէ Գորդիոնի վերաբնակիչներին դիտել որպես եվրոպական վերաբնակիչների։

Էթնիկական տեղաշարժերը հնակլիմայաբանության լույսի ներքո

Մ.թ.ա. XIII դարի վերջին—XII դարում Առաջավոր Ասիայում ընթացած էթնիկական տեղաշարժերի կապակցությամբ խիստ կարևոր են այս տարածաշրջանի հնակլիմայաբանական ուսումնասիրությունների արդյունքները[19]։

Պարզվում է, որ մոտավորապես մ.թ.ա. 1200—900 թթ. Եվրոպայում և Մերձավոր Արևելքում նկատվել է կլիմայի աստիճանական տաքացում և չորացում, որը հաջորդել է համեմատաբար սառը և խոնավ կլիմային (մ.թ.ա. 1500—1200 թթ.)[20]։ Կլիմայական այս փոփոխությունները բացահայտված են Միջագետքի, Սիրիայի և Փոքր Ասիայի նյութի հիման վրա։

---

17 Т. А. Моисеева. К вопросу о характере Фригийского государства в VIII—начале VII вв. до н. э.—Вестник древней истории, 1986, № 3, с. 17.

18 Նույնիսկ խաթթի անկման միգրացիոն տեսության կողմնակիցներից ոմանք ժխտում են մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին բալկանյան թրակիայից դեպի հյուսիս-արևմտյան Փոքր Ասիա կամ այստեղից թերակղզու կենտրոն ընթացած որևէ տեղաշարժի հնարավորություն, քանի որ վերջինում մինչև մ.թ.ա. IX—VIII դդ. ոչ մի փռյուգական բնակավայր չի հայտնաբերվել (R. A. Crossland. Immigrants from the North. — „CAH", vol. I, ch XXVII, 1964, p. 857):

19 J. Neumann and S. Parpola. Climatic Change and the Eleventh-Tenth-Century Eclipse of Assyria and Babylonia. — Journal of Near Eastern Studies. vol. 46, 1987, 3, pp. 161—162.

20 Սառը, անձրևային կլիման պայմանավորված է եղել արևի ակտիվության նվազմամբ (J. A. Eddy. Climate and the Changing Sun. — „Climatic Change", vol. 1, 1977, p. 182f.): Օրինակ, միջին և ուշ բրոնզեդարում հյուսիսային Սիրիայում նկատվել է խոնավության շարունակական աճ, իսկ Փոքր Ասիայում և հայկական լեռնաշխարհում ուշ բրոնզեդարի վերջին (մ. թ. ա XIII դարի վերջ)՝ անտառների ծավալման բարձրակետ (J. A. Bintliff. Climatic Change, Archaeology, and Quarternary Science in the Eastern-Mediterranean Region, „Climatic Change in Late Prehistory", Edinburgh, 1982, p. 146 [հղումը ըստ J. Neumann and S. Parpola. O. cit., p. 165]):

Այսպես, Եփրատի ու Տիգրիսի ջրի մակարդակի տատանումները հետևյալ պատկերն են ներկայացնում[21].

1) Կտրուկ աճ (մոտավորապես մ.թ.ա. 1450 թ.)

2) Աճի բարձրակետ (մոտ մ.թ.ա. 1350—1250 թթ.)

3) Կտրուկ անկում, որը հասել է նվազագույն մակարդակի մ.թ.ա. 1150 թ. մոտերքում

4) Համեմատական աճ մոտավորապես մ.թ.ա. 950 թ.

Ֆրանսիացի հնագետ Կ. Շեֆերը նշում է, որ Ուգարիտի (ժամանակ. Ռաս-Շամրա, Սիրիայի հյուսիս-արևմուտք) անկման շրջանի (մ.թ.ա. XII դարի սկիզբ) կառույցների ավերակները գտնվում են մանր, փոշենման, բաց դեղնավուն միատարր մասնիկներից բաղկացած հողաշերտի մեջ, որը վկայում է Ուգարիտի գոյության վերջին փուլում տիրող ծայրաստիճան տաք և չոր կլիմայի մասին։ Ընդ որում այդ շերտին նախորդում և հաջորդում է մուգ շագանակագույն, ոչ փոշետիպ բաղադրություն ունեցող հողաշերտը, որը ավելի խոնավ կլիմայի արտահայտությունն է[22]։

Նույն պատկերն է վկայված նաև Էնկոմիում (Կիպրոս կղզի)[23]։

Այսպիսով, շնորհիվ հնակլիմայաբանական հետազոտությունների, այսօր ի հայտ է գալիս ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմության մի նոր, նախկինում օբյեկտիվորեն անհայտ գործոն, որը կարող է նպաստել էթնիկական տեղաշարժերի իրական պատճառների վերհանմանը։ Միայն համառերիոնալ բնույթի երևույթը կարող էր արևելամիջերկրածովյան ավազանը (Փոքր Ասիա, սիրիա-պաղեստինյան շրջան, Նեղոսի Դելտա), Հայկական լեռնաշխարհի արևմուտքը և Միջագետքը ընդգրկած լայնամասշտաբ տեղաշարժերի պատճառ դառնալ։ Ուշագրավ է, որ կլիմայական պայմանների վատթարացումը վկայված է համաժամանակյա միջագետքյան գրավոր աղբյուրներում[24]։

Էթնիկական տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհում

Նախքան այս խնդրին անցնելը ամփոփենք վերը արված եզրակացությունները, որոնք համապատասխան ֆոն են ստեղծում և նպաստում դրա ճիշտ ընկալմանը։ Իրադարձությունների ընթացքը շարադրված է ժամանակագրական հաջորդականությամբ։

1) Խութթիի մայրաքաղաք Խաթթուսասում և Փոքր Ասիայի մի շարք կենտրոնական շրջաններում տևական երաշտի պատճառով սովահար բնակ-

---

[21] P. A. Key and D. L. Johnson. Estimation of Tigris-Euphrates Streamflow from Regional Paleoenvironmental Proxy Date. — „Climatic Change", vol. 3, 1981, pp. 251 - 63. Հարկ է նշել, որ այս ուսումնասիրության նյութերի մի մասը հենվում է ռադիոկարբոնային (C 14) տվյալների վրա, որը կարող է 100± տարվա հավաստիության տատանում տալ։

[22] J.-C. Schaeffer. Ugaritica V. Paris, 1968, p. 761ff.

[23] J.-C. Schaeffer. Encomi-Alasia Vol. 1, Paris, 1952, p. 358f (հղումը ըստ՝ J. Neumann and S. Parpola. Op. cit., p. 164).

[24] Ս. Պարպոլան կատարել է մ.թ.ա. XII—X դդ. ասորեստանյան և բաբելոնյան գրավոր աղբյուրների ծաղկաքաղ, որտեղ խոսվում է Միջագետքում կլիմայի չորացման ու դրա արդյունքը հանդիսացող սովի մասին (նշվ. աշխ., 178 ff)։ Ուշագրավ է, որ կլիմայական պայմանների փոփոխության մասին հիշողություններ են պահպանվել նաև Հերոդոտոսի մոտ, որը հաղորդում է Լիդիայում իշխած 18-ամյա սովի մասին. հետևանքը լիդիացիների մի մասի արտագաղթն էր դեպի Իտալիա (Հ ե ր ո դ ո տ ո ս. Պատմություն. Երևան, 1986, I 94)։ Կլիմայի նույնիսկ նվազագույն, սակայն պարբերական տաքացման ծանր հետևանքների մասին կարելի է դատել Միջագետքի օրինակով։ 1°C տաքացումը կարող է 30 մմ պակասեցնել տարեկան տեղումների քանակը, և սա այն դեպքում, երբ նախալեռնային շրջաններում դրանց ծավալը կազմում է 200—500 մմ, իսկ Ջեզիրեի շրջանում՝ 50—150 մմ։ Բնական տեղումների հաշվին կազմակերպվող երկրագործության համար անհրաժեշտ տեղումների նվազագույն ծավալը 200 մմ է (J. Neumann and S. Parpola. Op. cit., p. 162):

չության խոշոր ապստամբության հետևանքով այդ տերությունը տրոհվում է, իսկ բնակչությունը զանգվածաբար տեղաշարժ է կատարում դեպի առավել նպաստավոր բնակության վայրեր[25]։

2) Կլիմայի չորացման հետևանքով սիրիական տափաստանային-անապատային գոտուց մ.թ.ա. XII—XI դդ. սկիզբ է առնում արամեական բազմաթիվ ցեղերի լայնամասշտաբ տեղաշարժ դեպի Միջագետք[26]։

3) Արևմտյան Փոքր Ասիայից սկսվում է փռյուգական-թրակյան ցեղերի աստիճանական տեղաշարժ դեպի արևելք (Սանգարիոս գետի հովիտ), որը, հավանաբար, հետևանք էր հունական գաղութացման։ Արդյունքում հետառայի Մեծ Փռյուգիայի տարածքում սկսում է գերակշռել փռյուգական էթնոսը (մ.թ.ա. XI—X դդ.)։

Այսպիսով, գծագրվում է մ.թ.ա. XIII դարի վերջին—XII դարում Առաջավոր Ասիայում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի իրական դրդապատճառը՝ բնակլիմայական պայմանների վատթարացումը։ Որ դրանք պայմանավորված էին ջրային ռեսուրսների ու կենսամիջոցների հայթայթման հնարավորությունների նվազմամբ, ավելի քան պարզ է դառնում «ծովի ժողովուրդների» ու արամեական ցեղերի տեղաշարժերի նպատակակետից։ Առաջինները ձգտում էին դեպի Նեղոսի դելտա, վերջիններս՝ Միջագետք։ Նշված երկու շրջաններ, շնորհիվ երեք խոշոր գետերի ջրային պաշարների (նույնիսկ դրանց մակարդակի որոշ անկման դեպքում), ի վիճակի էին ապահովելու տեղական բնակչության հիմնական զանգվածի նվազագույն կարիքները։ Նույնը չի կարելի ասել բնական տեղումների հաշվին կազմակերպվող երկրագործական-անասնապահական շրջանների (Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ) մասին։

Այժմ անդրադառնանք քննարկման առարկա հանդիսացող վերջին խնդրին՝ մուշկերի և ուրումեացիների տեղաշարժին։ Մեր նախկին տեսակետը հանդում էր հետևյալին։

Այս ցեղերը կազմել են Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների, մասնավորապես խեթական աղբյուրների Հայասա-Ազզիի բնակչությունը (համենայնդեպս, մի մասը)։ Մ.թ.ա. XIII դարի վերջերին—XII դարի առաջին կեսին իրենց ավանդական դաշնակից եսկերի հետ նոանք որոշակի մասնակցություն են ունեցել Խեթիի կործանման գործին։ Քիչ ավելի ուշ, օգտվելով Ասորեստանի թուլացումից, շարժվել են հառավ և բնակություն հաստատել նրա ազդեցության ոլորտում գտնվող Ալզի, Պուրուկուզզի, այնուհետև՝ Կադմուխի երկրներում։

---

25 Առայժմ դժվար է որոշել, թե դեպի ուր կարող էր ուղղված լինել այդ տեղաշարժը՝ Հյուսիսային Սիրիա, Փոքր Ասիայի արևելք, թե թերակղզու հակառակ կողմը (էգեյան ծովեզերք)։ Նկատի առնելով այն հանգամանքը, որ եգիպտական փարավոններ Մերենպտահի և Ռամզես III-ի հիշատակած «ծովի ժողովուրդները» հիմնականում տեղադրվում են Փոքր Ասիայի հարավային և արևմտյան ծովեզրյա շրջաններում (այդ մասին մեր՝ հրատարակության պատրաստվող „Малая Азия в XII—X вв. до н. э. (становление лувийской государственности" աշխատության մեջ), կարելի է ենթադրել, որ, բացի կլիմայական պայմանների վատթարացումից, վերջիններս, հնարավոր է, ստիպված են եղել լքելու իրենց բնակավայրերը թերակղզու կենտրոնական շրջանների բնակչության ճնշման տակ։

26 Արամեացիների՝ մի քանի դար տևած առաջխաղացման մասին դեպի Միջագետք տե՛ս R. T. O'Callaghan. Aram Naharaim. Roma, 1948, pp. 93—118; W. F. Albright. Northeast-Mediterranean Dark Ages and the Early Iron Age of Syria. — „The Aegean and the Near East. Studies Presented to Hetty Goldman", Locust Valley, New York, 1956, p. 144ff.; D. J. Wiseman. Assyria and Babylonia, c. 1200—1000 B. C. — „CAH", vol. II. ch. XXXI, 1965, pp. 24—31; J. A. Brinkman. A Political History of Post-Kassite Babylonia. Roma, 1968, p. 267ff.; Г. М. Аветисян. Ранние сведения о распространении арамейских племен по Северной Месопотамии и Армянскому нагорью.—Историко-филологический журнал, 1984, № 3, сс. 37—44:

Խաթթիի անկման նոր մեկնաբանության և հնակլիմայաբանական տվյալների լույսի ներքո մուշկերի և ուրումեացիների տեղաշարժը նպատակահարմար ենք համարում դիտել առաջավորասիական տեղաշարժային ալիքների հետ մի ընդհանուր ենթատեքստում։ Մեր կարծիքով, մուշկերի և ուրումեացիների տեղաշարժը նույնպես պայմանավորված է եղել բնակլիմայական պայմանների վատթարացմամբ։ Դրանից ելնելով, նպատակահարմար չենք գտնում որևէ կապ տեսնել Խաթթիի անկման և նշված ցեղերի՝ Վերին Տիգրիսի ավազանում հայտնվելու միջև։ Ինչ վերաբերում է մուշկերի և ուրումեացիների ավելի կոնկրետ տեղադրման հարցին, ապա այն հատուկ ուսումնասիրության կարիք ունի։

P.S.—*Մեր հոդվածն արդեն պատրաստ էր հրատարակության, երբ լույս տեսավ «Պատմա-բանասիրական հանդեսի» հերթական համարը, որտեղ զետեղված է ակադ. Գ. Խ. Սարգսյանի ուշագրավ ուսումնասիրությունը*[27]։ *Այստեղ առաջարկվող Հայկի բաբելոնյան ելակետի մակաշերտային (աստվածաշնչական) էության և փոխարենը մինչաստվածաշնչային՝ արևմտյան-անդրեփրատյան (Տուն Թորգոմա՛յ-խեթական Թա/եգարամա, ասորեստանյան Թիլգարիմմու) ելակետի հիմնավորումը, մեր կարծիքով, խիստ արդյունավետ ուղենիշ է հայ ժողովրդի կազմավորման կարևոր փուլերից մեկի ուսումնասիրության գործում։ Եվ որ առավել կարևոր է, հայկական էթնոսի տեղաշարժի վերոհիշյալ երթուղին (Տուն Թորգոմա՛յ-Հարք-Տուն Կադմեայ) աշխարհագրական և ժամանակագրական առումով համահունչ է ասորեստանյան աղբյուրների հիշատակած մուշկերի և ուրումեացիների տեղաշարժերին, ինչպես նաև վերը առաջարկված՝ մուշկերի արևելյան տեղադրմանը։ Այս կապակցությամբ կցանկանայինք նշել մեկ կարևոր նկատառում։*

Միայն մի դեպքում աստվածաշնչային և հայկական ավանդության մեջ Թորգոմը կդիտվեր որպես հայերի նախահայր, եթե անդրեփրատյան Մալաթիա-Գյուրյուն (խեթ. Մալդիա-Թա/եգարամա) շրջանը կազմեր հայկական ցեղերի բնակության նախնական տարածքը (կամ, համենայնդեպս, դրանցից մեկը)։ Այստեղ մուշկերի և ուրումեացիների՝ մեկ-երկու տասնամյակի ժամանակավոր հանգրվանումը Բալկաններից ընթանալիս հազիվ թե արմատավորվեր ավանդության մեջ և նույնիսկ հետագայում դուրս չմղվեր աստվածաշնչային ավանդության կողմից։

СНОВА ОБ ЭТНИЧЕСКИХ ПЕРЕДВИЖЕНИЯХ

А. В. КОСЯН

Резюме

После выхода в свет статьи «Этнические передвижения в Малой Азии и Армянском нагорье в XII в. до н. э.», («Историко-филологический журнал», 1991, № 1) стали известны некоторые важные факты по проблеме падения Хеттской империи, а также результаты палеоклиматологического изучения ближневосточного региона. На этом основании стало возможным предложить существенно обновленные выводы по истории этнических передвижений в эпоху поздней бронзы и раннего железа. 1. В последней четверти XIII в. до н. э. в результате потепления климата, приведшего к сокращению ежегодных осадков и водных ресурсов в Малой Азии, Армянском нагорье, а также в сирийско-месопотамском регионе, начинается почти трехвековой кризис ближневосточных обществ. Продолжительная засуха в Малой Азии

---

27 *Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրը), 1992, № 2—3, էջ 27—50։*

явилась прямой причиной крупного восстания голодающего населения, которое привело к распаду Хеттской империи. Население центральной Малой Азии устремилось в прибрежные районы полуострова, в Сирию и Палестину (т. н. «дисперсионная теория»). Тем самым традиционную миграционную теорию падения империи хеттов можно считать устаревшей. 2. «Дисперсионная теория» отвергает участие в гибели Хеттской империи «народов моря», фрако-фригийцев, а также касков, мушков и урумейцев. В общем контексте климатических изменений на Ближнем Востоке целью передвижения касков, мушков и урумейцев, вероятно, являлись богатые водными ресурсами районы Северной Месопотамии. Именно сюда было направлено встречное движение в тот же период арамейских племен с запада.

AGAIN ABOUT ETHNIC MOVEMENTS

A. V. KOSSIAN

Summary

Soon after the publication of our article „The Ethnic Movements in Asia Minor and the Armenian Highland in the XII c. B. C." („Patma-banastrakan handes", 1991, 1) some new important data have come to our disposal concerning the fall of the Hittite Empire and connected problems, as well as the results of palaeoclimatological analysis of the ancient Near-East. On these grounds we are able to revise our conclusions about the history of ethnic movements in the Late Bronze Age and Early Iron Age. 1. Because of the warm and dry climate in the last quarter of the XIII c. B. C., yearly sediments and resources of water in Asia Minor, the Armenian Highland, and in Syria-Mesopotamia were reduced which causes a crisis for Near-Eastern societies for almost three centuries. The Long-lasting drought in Asia Minor led to a strong upheaval of its starving population, after which the Hittite Empire disintegrated. The population of Central Anatolia came into motion and settled the coastal regions of the peninsula, Syria and Palestine (the so-called „theory of dispersion"). So, the traditional migrative theory must be rejected 2. The „theory of dispersion" refutes the possible participation of the „Sea-Peoples", Phrygians-Phrygians, as well as Kaskaeans, Mushku, and Urumu in the destruction of the Hittite Empire. In the context of climatic changes in the Near East the movement of the three latter ethnic groups, probably, was aimed to reach the Northern Mesopotamian region, with its rich water resources.